

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆ ԲՈՆԵԼԻՍ ՎՆԱՍ ՊԱՌՃԱՌԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հասմիկ Սմբատյան

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական
իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս,
ոստիկանության մայոր*

ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ գլուխը սահմանում է արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները: Վերջիններս այն պայմաններն են, որոնց առկայությունը արտաքնապես հանցագործությանը նման արարքները վերածում է իրավաչափ, հաճախ նույնիսկ օգտակար արարքների¹:

Ներկայումս քրեական օրենսգրքը ամրագրում է արարքի հանցավորությունը բացառող հետևյալ հանգամանքները՝ անհրաժեշտ պաշտպանությունը, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը, ծայրահեղ անհրաժեշտությունը, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը, հիմնավորված ռիսկը, հրաման կամ կարգադրություն կատարելը:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները մեր քրեական օրենսգրքում առկախ են: Գործնականում հանդիպում են իրավիճակներ, որոնք կամ վիճահարույց են, կամ օրենսդրական կարգավորում չունեն: Այդ իրավիճակները քննելիս անհրաժեշտություն է առաջանում վերանայել արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները՝ դրանց իրավական կարգավորման մեջ արմատական փոփոխություններ կատարելու համար:

Սույն հոդվածի շրջանակներում քննարկվել է հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի օրենսդրական բարեփոխմանը վերաբերող որոշ հարցեր: ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածը սահմանում է հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք: Այսպես՝ հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը հանցանք կատարած անձին վնաս է պատճառել՝ նրան իրավասու մարմիններին հանձնելու կամ նրա կողմից հանրության համար վտանգավոր նոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակով բռնելիս, եթե դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանների անցում թույլ չի տրվել: Նշենք, որ արարքի հանցավորությունը բացառող սույն հանգամանքը նոր չէ, և ներկայումս ԱՊՀ բոլոր երկրների քրեական օրենսգրքերում առանձին նորմով սահմանված է հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը: Մի շարք երկրներում վերը նշված հանգամանքներում վնաս պատճառելը նույնանում է անհրաժեշտ պաշտպանությանը:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության դրույթները մասամբ համընկնում են անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության դրույթներին: Տարբերությունն այն է, որ հանցանք կատարած անձին բռնելիս

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, ԵՊՀ հրատ., 2006թ., էջ 319:

հնարավոր է վնաս պատճառել ինչպես հանցանք կատարելու պահին, այնպես էլ դրանից հետո, իսկ անհրաժեշտ պաշտպանության դեպքում՝ միայն հանրորեն վտանգավոր ոտնձգության պահին: Ժամանակային խզումը, որի ընթացքում կարելի է վնաս պատճառելով բռնել, բոլոր երկրներում միատեսակ չէ: Օրինակ՝ Բելառուսի քր. օր.-ում հանցանք կատարած անձին վնաս պատճառելով բռնել կարելի է միայն, երբ վերջինս կարող է կամ փորձում է թաքնվել քննությունից կամ դատից: Ղրղզստանի քր. օր.-ը վնաս պատճառելով թույլատրում է բռնել հանցանք կատարելու պահին կամ դրանից անմիջապես հետո: Մինչդեռ Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Բուլղարիայի, Մոլդովայի, Թուրքմենստանի քր. օր.-ում ժամանակային խզման մասին որևէ մեկնաբանում չկա, և ենթադրվում է, որ վնաս պատճառելով բռնել կարելի է երկու դեպքերում՝ հանցանք կատարելու պահին, հանցանք կատարելուց հետո:

Առաջինի դեպքում ենթադրությունը բխում է ՀՀ քր. օր.-ի 43-րդ հոդվածի 1-ին մասի հետևյալ ձևակերպումից՝ «...նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակով բռնելիս»: Այստեղ երկիմաստության տեղիք է տալիս խափանել բառը, որը մասնագիտական գրականության մեջ մեկնաբանվում է որպես արդեն իսկ սկսված արարքի ընդհատում: Այդ դեպքում եթե օրենսդիրը նկատի ունի հետագայում անձի կողմից կատարվելիք նոր արարքը ընդհատելուն, ապա, թերևս, ճիշտ կլիներ կիրառել ոչ թե խափանել, այլ կանխել տերմինը: Իսկ եթե արարքի կատարման պահին է նկատի առնվել որպես հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ժամանակահատված, ապա այս մոտեցումը, մեր կարծիքով, ճիշտ չէ, քանի որ արարքի կատարման պահը կդիտվի որպես հանրորեն վտանգավոր ոտնձգություն, և այդ հանգամանքում ոտնձգողին վնաս պատճառելն արդեն դուրս է քննարկվող հանգամանքներում վնաս պատճառելու տիրույթից: Վերջինս նույնանում է արարքի հանցավորությունը բացառող մեկ այլ հանգամանքի՝ անհաժեշտ պաշտպանությանը:

Հաջորդ վիճելի խնդիրն այն է, որ ՀՀ քր. օր.-ի 43-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է վնաս պատճառելով բռնել միայն հանցանք կատարած անձանց: Ասվածից տրամաբանորեն պարզ է դառնում, որ անմեղսունակության վիճակում, ինչպես նաև քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձինք, ովքեր կատարել են հանրորեն վտանգավոր արարք, այս տիրույթից դուրս են, ուստի վերջիններիս 43-րդ հոդվածը վնաս պատճառելով բռնել չի նախատեսում: Այս իմաստով արարքի հանցավորությունը բացառող մեկ այլ հանգամանք՝ անհրաժեշտ պաշտպանությունը (հոդվ.42), տարածական առումով ավելի ընդգրկում է և սահմանում է, որ հանրության համար վտանգավոր ոտնձգությունից անձը կարող է պաշտպանվել՝ ոտնձգողին վնաս պատճառելով: Ասվածից ակնհայտ է դառնում հետևյալ հակասական իրավիճակը, որ մի դեպքում վերը նշված անձանց կողմից հանրորեն վտանգավոր ոտնձգություն կատարելու պահին օրենքը թույլ է տալիս վնաս պատճառել վերջիններս (հոդվ. 42, 1-ին մ.), մինչդեռ, մյուս դեպքում, նույն անձանց վնաս պատճառելով բռնելն արգելվում է (հոդվ. 43, 1-ին մ.), քանի որ վերջիններիս կատարած հանրորեն վտանգավոր արարքը չի համարվում հանցանք: Այստեղից հետևում է, որ մեր քրեական օրենսգրքի 8-րդ գլխում նախատեսված արարքի հանցավորությունը բացառող երկու հանգամանքներ հակասում են միմյանց:

Խոսելով վերը շարադրվածի մասին՝ ճիշտ ենք համարում վերանայել այն մոտեցումը, որը նախատեսում է վնաս պատճառելով բռնել միայն հանցանք կատարած անձին՝ ընդլայնելով դրա շրջանակը և այն տարածելով ինչպես անմեղսունակության վիճակում գտնվողների, այնպես էլ քրեական պատասխանատվության տարիքի չհասածների վրա: Այս առումով, թերևս, առավել հաջողված է Ուզբեկստանի քր.

օր.-ի համապատասխան դրույթը, որը նախատեսում է վնաս պատճառելով բռնել ոչ թե հանցանք, այլ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձանց:

Անդրադառնանք այն հարցին, թե արդյոք հանցագործության բոլոր տեսակների դեպքում կարելի է վնաս պատճառելով բռնել: ՀՀ քր. օր.-ի 43-րդ հոդվածը այս հարցին ևս միանշանակ լուծում չի առաջարկում: Եթե հետևենք օրենքի տառին, կտեսնենք, որ այն թույլ է տալիս վնաս պատճառելով բռնել ցանկացած հանցանքի դեպքում՝ ոչ մեծ ծանրության, միջին, ծանր, առանձնապես ծանր: Սակայն գործնականում վնաս պատճառելով բռնել կարելի է միայն ծանր, առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում: Մեր կարծիքով, այս մոտեցումը ճիշտ չէ, քանի որ ՀՀ քր. օր.-ի 43-րդ հոդվածի 4-րդ մասը վնաս պատճառելով բռնելու իրավունք է ընձեռում ինչպես տուժողին, այնպես էլ այլ անձանց: Այստեղից հարց է ծագում, թե արդյոք վերջիններս օժտված են այնքան բարձր իրավագիտակցությամբ, որ վնաս պատճառելուց առաջ որոշեն, թե կատարված արարքը հանցագործության ո՞ր տեսակն է՝ «ոչ մեծ ծանրությամբ», «միջին», «ծանր», «առանձնապես ծանր», կամ չէ՞ անցել արդյոք տվյալ արարքի՝ օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները, նոր միայն վնաս պատճառելով բռնեն: Չունենալով այդպիսի իրավագիտակցություն, բայց ունենալով հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավունք՝ տուժողը կամ այլ անձը նույնիսկ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում, հնարավոր է, ավելի մեծ վնաս հասցնի: Ուստի առավել նպատակահարմար կլինեք հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը չկապել արարքի ծանրության հետ և հանցանք կատարած անձին գործնականում ևս վնաս պատճառելով բռնել ցանկացած ծանրության հանցանքի դեպքում, եթե, իհարկե, սահմանազանցման խնդիր չկա: Վեճերի տեղի է տալիս նաև այն հարցը, թե ինչ վնաս կարելի է պատճառել հանցանք կատարած անձին բռնելիս: Այս հարցի շուրջ տեսակետները դարձյալ միանշանակ չեն: Վնասը կարող է լինել առողջական, նյութական, բարոյական: Հանցանք կատարած անձին վնաս պատճառելով բռնելիս հարկ է հաշվի առնել հանցանք կատարած անձի, ինչպես նաև արարքի վտանգավորությունը, բռնելու վայրը, պայմանները և այլ հանգամանքներ: Որքան բարձր է արարքի և այն կատարողի վտանգավորությունը, այնքան մեծ վնաս կարելի է պատճառել նրան բռնելիս:

Այստեղ էլ հարց է ծագում, թե կարելի է արդյոք հանցանք կատարած անձին բռնելիս մահ պատճառել: Կան երկրներ, որտեղ թույլ է տրվում հանցանք կատարած անձին անգամ մահ պատճառել: Օրինակ՝ Կանադայում թույլատրվում է բռնվողին մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառել միայն այն դեպքում, եթե հետապնդում իրականացնող անձն օբյեկտիվորեն կարծում է, որ իրեն կամ երրորդ անձի սպառնում է մահ կամ առողջությանը ծանր վնաս: ԱՄՆ-ի մի շարք նահանգներում (Նյու Յորք, Կալիֆորնիա) բացառիկ դեպքերում է թույլատրվում թաքնվող հանցագործին մահ պատճառել, եթե վերջինից մինչև անգամ անմիջական սպառնալիք չկա¹: Բռնելիս վնաս հասցնելը պետք է լինի արդարացված և բխի անհրաժեշտությունից: Վնաս պատճառելն արդարացված է, եթե հնարավոր չէր հանցանք կատարած անձին բռնել այլ կերպ: Այս մոտեցումն է դրված Ադրբեջանի, Բելառուսի, Բուլղարիայի, ՌԴ-ի համապատասխան նորմերում: Իսկ Թուրքմենստանի քր. օր.-ում բռնելիս վնաս պատճառելը արդարացված է, եթե վնաս պատճառվել է դիմադրություն ցույց տվող հանցագործին: Ստացվում է, որ պարզապես փախչող հանցագործին չի կարելի անգամ ոտքով խոչընդոտել, քանի որ վերջինս կարող է վայր ընկնել ու վնասվածք ստանալ: ՀՀ քրեական օրենսգիրքը չի սահմանում, թե կարելի է

¹ Տե՛ս **В. Н. Додунов**, Сравнительное уголовное право, общая часть, Москва, 2010 թ., էջ 227:

արդյոք հանցանք կատարած անձին մահ պատճառել: Միայն օր.-ի հատուկ մասի 107-րդ հոդվածը սահմանում է դրա անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանությունը: Այստեղից ենթադրվում է, որ օրենքը հանցանք կատարած անձին մահ պատճառելը որոշ դեպքերում դիտում է իրավաչափ: Մասնավորապես, հանցանք կատարած անձին բռնելու ընթացքում նրան սպանելը թույլատրվում է՝

1. երբ հանցավորն այնպիսի ակտիվ դիմադրություն է ցույց տալիս, որը սպառնում է բռնողի կամ այլ անձանց կյանքին:

2. երբ փախուստի դիմած հանցագործը կատարել է կյանքի համար վտանգավոր բռնությամբ զուգորդված ծանր կամ առանձնապես ծանր հանցանք, և նրան բռնելու այլ միջոցներ չկան¹:

Վերը նշված առաջին պայմանի դեպքում իրադրությունը դարձյալ փոխվում է անհրաժեշտ պաշտպանության: Ինչ վերաբերում է երկրորդ պայմանին, ապա 43-րդ հոդվածը դա չի նախատեսում: Այսինքն՝ առկա է օրենսդրական բաց, և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգը անդրադառնում է հանցանք կատարած անձին կյանքից զրկելու իրավաչափության պայմաններ նախատեսելու խնդրին:

Եթե խնդիրը դիտարկենք անհրաժեշտ պաշտպանության տեսանկյունից, ապա 42-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ: Նշվածը ուղղակիորեն բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթից, որը սահմանում է «անհրաժեշտ պաշտպանության ժամանակ կյանքից զրկելը պետք է պայմանավորված լինի բացարձակ անհրաժեշտությամբ»: Այստեղ չի մեկնաբանվում, թե հատկապես որ իրադրությունն է համարվում բացարձակ անհրաժեշտություն: Ենթադրվում է, որ դա պետք է ուղղակի վերաբերի մարդու կյանքի համար վտանգավոր իրավիճակներին: Առաջնորդվելով այս տրամաբանությամբ՝ նույնը կարելի է դիտարկել նաև հանցանք կատարած անձին բռնելու ինստիտուտի առնչությամբ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մի շարք երկրների քրեական օրենսգրքերը սահմանում են հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու նպատակ: Մասնավորապես Վրաստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի քրեական օրենսգրքերում որպես նպատակ նշված է հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելով իշխանության մարմիններին հանձնելը: Մինչդեռ Բելառուսի, Թուրքմենստանի, Բուլղարիայի, Ադրբեջանի, ինչպես նաև Հայաստանի քրեական օրենսգրքերում նախատեսում են հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու երկու նպատակ՝ իրավասու մարմիններին հանձնելը, նրա կողմից նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելը:

Երկրորդ նպատակում նշված «խափանել» բառի ժամանակային իմաստի մասին վերն արդեն պարզաբանել ենք, և եթե օրենսդիրը դիցուք նկատի է ունեցել դրա կանխելը, ապա որպես նպատակ այն ևս արդարացված չէ մի քանի պատճառներով: Նախ՝ որ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության իր մտքերի, գաղափարների համար, քանի դեռ դրանք օբյեկտիվ իրականության մեջ չեն առարկայացել: Հետևաբար, հանցանք կատարած անձին վնաս պատճառելով բռնելը՝ նրա կողմից կատարվելիք արարքները կանխելու նպատակով, արդարացված չէ: Ստացվում է, որ մենք վնաս ենք պատճառում ապագայում նոր հանցանքը կանխելու համար, այսինքն՝ «ավանսով» պատժում ենք հանցանք կատարած անձին՝

¹ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, ԵՊՀ հրատ., 2006 թ., էջ 115:

խախտելով միաժամանակ և՛ ըստ մեղքի պատասխանատվության, և՛ արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Բացի այդ, օրենսդիրը չի նշում երկրորդ նպատակի վերջնական սահմանները: Այսինքն՝ հանցանք կատարած անձի ճակատագիրը, որին վնաս պատճառելով բռնում ենք՝ նրա կողմից նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակով, մնում է անորոշ: Օրենսդիրը չի հստակեցնում, թե վերջնականապես ինչպես ենք վարվում նրա հետ՝ հանձնում ենք համապատասխան մարմինների^օն, բուժհաստատության^օնը, թե՞ մեկ այլ տեղ: Ուստի, նշվածը որպես նպատակ համակողմանի վերլուծելով՝ կարծում ենք, որ ճիշտ կլինի հողվածի այդ հատվածը խմբագրել:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք արարքի հանցավորությունը բացառող ինստիտուտի օրենսդրական հետևյալ լուծումները՝

1. Նախ, ՀՀ քր. օր.-ի 43-րդ հոդվածի առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին վնաս է պատճառել նրան իրավասու մարմիններին հանձնելու նպատակով բռնելիս, եթե թույլ չի տրվել բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանների անցում»:

2. ՀՀ քր. օր.-ի 43 հոդվածով նախատեսել հանցանք կատարած անձին բռնելիս մահ պատճառելու իրավաչափության վերաբերյալ հետևյալ դրույթը. «Մարդու կյանքի համար վտանգավոր բռնությամբ զուգորդված հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս կարելի է պատճառել ցանկացած վնաս, այդ թվում՝ նաև մահ, եթե չկա բռնելու այլ միջոց»:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ИНСТИТУТА ПРИЧИНЕНИЯ ВРЕДА ПРИ ЗАДЕРЖАНИИ ЛИЦА, СОВЕРШИВШЕГО ПРЕСТУПЛЕНИЕ, В РА

Асмик Смбатян

*Преподаватель кафедры уголовного
права и криминологии факультета правоведения
Академии образовательного комплекса
Полиции РА, майор полиции*

Настоящая статья посвящена нанесению вреда лицу, совершившему преступление, как обстоятельства, исключающего преступность деяния. В статье представлены роль, значение, особенности вышеуказанного обстоятельства, которыми оно отличается от других обстоятельств исключающих преступность деяния.

В рамках статьи представлены существующие проблемы и пробелы правового урегулирования указанных обстоятельств, приведены сравнения относительно соответствующих положений других стран.

В статье предложены некоторые положения правового урегулирования института причинения вреда при задержании лица, совершившего преступление.

THE TENDENCIES OF THE DEVELOPMENT OF HARMING WHILE DETAINING AN OFFENDER IN RA

Hasmik Smbatyan

Lecturer at the Academy of Police Educational Complex of the RA, Chair of Criminal Law and Criminology, Police major

The article deals with the topic of harming an offender as a circumstance eliminating the criminality of the act. The role, meaning, peculiarities of the above mentioned circumstance which makes it different from other circumstances eliminating the criminality of the act are discussed.

In the article the present problems and gaps of legal regulation of the mentioned circumstances are dealt as well as some comparisons referring to appropriate regulations of other countries are made.

Some regulations of legal settlement of the institution of harming while detaining an offender are proposed in the article.

Բանալի բառեր - հանցանք կատարած անձ, հանրորեն վտանգավոր արարք, ոտնձգություն, արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, հանցանք կատարած անձին բռնել, հանցանք կատարած անձին վնաս պատճառել:

Ключевые слова- лицо, совершившее преступление, общественно опасное деяние, посягательство, обстоятельство, исключающее преступность деяния, задержание лица совершившее преступление, причинение вреда лицу, совершившему преступлению.

Key words: offender, socially dangerous act, the encroachment, a circumstance eliminating the criminality of the act, to detain an offender, to harm the offender.